ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-19/15-2
ՀՀՌՑ ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌՈՒՏԱԿԱՅԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՕԴԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք.Երևան «03» հունվար 2019 թ.

«Հայաստանի հեռուստատեսային եվ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Գագիկ Ալոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՆԵՐԳՈՆԱԶ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռաֆիկ Նազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **օդային գծերի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պպայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N 3) ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

3.2 Եթե Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 487 000 ( չորս հարյուր ութսուն յոթ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 (երեսուն) օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 9 /ինը/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի |
| Ամերիաբանկ ՓԲԸ | <<Կոնվերս Բանկ>>ՓԲԸ,Նոր Հաճն մասնաճ. |
| հ/հ 1570027609970100 | հ/հ 1930006838240100 |
| ՀՎՀՀ 01501898 | ՀՎՀՀ 03309022 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«03» 06 2019 թ. կնքված*
*ՀՀՌՖ-ԳՀԾՁԲ-19/15-2 ծածկագրով պայմանագրի*

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | կատարման | |
| Հ/Հ | CPV կոդը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը |
| 1 | 71241200 | **Բլդանչայի հեռուստակայանը** սնող 0.23 կՎ նոր կառուցվող էլեկտրահաղորդման գծի /միաֆազ, դրվածքային հզորությունը՝ 1կՎտ, գծի երկարությունը՝ մոտ 100մ/ նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայության ձեռքբերում | դրամ | 109000 | 109000 | 1 | ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Մոլդովական 11/3 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 1 /մեկ/ ամիս |

* <u>Ծառայության անվանումը՝</u> **Բլդանչայի հեռուստակայանը** սնող 0.23 կՎ էլեկտրահաղորդման գծի /միաֆազ, դրվածքային հզորությունը՝ 1կՎտ, գծի երկարությունը՝ մոտ 100մ/ նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակում, ծախսերի գնահատում, նախագիծը համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ :
էլեկտրասնուցումը նախատեսված է իրականացնել "ՄՏՍ Հայաստան" ՓԲԸ ընկերության ԳԵ-6796 տրանսֆորմատորային ենթակայանից (տեխնիկական պայմանը և "ՄՏՍ Հայաստան" ՓԲԸ համաձայնությունը առկա են)
<u>**Տեխնիկական պահանջները**</u>
<u>Նախագծման փուլերը</u>
- ✓ տեղազննում և չափագրում
- ✓ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում

<u>**Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել փորձաքննությամբ:**</u>
<u>**Նախագծի կազմը**</u> տեխնիկական նախագիծ, ծավալաթերթ, նախահաշիվ /<u>**հայերեն և ռուսերեն**</u> <u>**լեզուներով**</u>/
Օրինակ՝ 2 (երկու) թղթային, էլեկտրոնային (PDF ձևաչափ)
<u>**Այլ պահանջներ**</u>
Պահանջվող լիցենզիա՝ **Քաղաքաշինության բնագավառում «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ <u>շինարարության թույլտվություն չպահանջող ծառայության</u>)» ըստ հետևյալ ոլորտների՝ <u>էներգետիկ</u>**
Նախագծային աշխատանքներն իրականացնել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջների:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 71241200 | **Վազաշենի հեռուստակայանը** սնող 0.23 կՎ նոր կառուցվող էլեկտրահաղորդման գծի /միաֆազ, դրվածքային հզորությունը՝ 1կՎտ, գծի երկարությունը՝ մոտ 220մ/ նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայության ձեռքբերում | դրամ | 159000 | 159000 | 1 | ՀՀ Տավուշի մարզի Վազաշեն համայնք | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 1 /մեկ/ ամիս |

* <u>Ծառայության անվանումը՝</u> **Վազաշենի հեռուստակայանը** սնող 0.23 կՎ էլ. էլեկտրահաղորդման գծի /միաֆազ, դրվածքային հզորությունը՝ 1կՎտ, գծի երկարությունը՝ մոտ 220մ/ նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման, նախագիծը համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների մարմինների, ինչպես նաև շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ:
էլ. սնուցումը նախատեսված է իրականացնել "ՄՏՍ Հայաստան" ՓԲԸ ընկերության ԳԵ-4334 տրանսֆորմատորային ենթակայանից (տեխնիկական պայմանը և "ՄՏՍ Հայաստան" ՓԲԸ համաձայնությունը առկա են)
<u>**Տեխնիկական պահանջները**</u>
<u>Նախագծման փուլերը</u>
- ✓ տեղազննում և չափագրում
- ✓ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում

Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել փորձաքննությամբ:
Նախագծի կազմը՝ տեխնիկական նախագիծ, ծավալաթերթ, նախահաշիվ /հայերեն և ռուսերեն լեզուներով/
Օրինակ՝ 2 (երկու) թղթային, էլեկտրոնային (PDF ձևաչափ)
Այլ պահանջներ
Պահանջվող լիցենզիա՝ **Քաղաքաշինության բնագավառում «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող ծառայության)» ըստ հետևյալ ոլորտների՝ էներգետիկ**
Նախագծային աշխատանքներն իրականացնել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջների:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 71241200 | **Մարտունում հեռուստակայան** սնող 10 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի կապիտալ վերանորոգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայության ձեռքբերում | դրամ | 219000 | 219000 | 1 | ՀՀ, Գեղարքունիքի մարզի Մարտունու հեռուստակայան | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 1 /մեկ/ ամիս |

* Ծառայության անվանումը՝ **Մարտունում հեռուստակայան** սնող 10 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի կապիտալ վերանորոգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայության ձեռքբերում
Գեղարքունիքի մարզի Մարտունու հեռուստակայանի Գ4439 տրանսֆորմատորային ենթակայանի սնուցումն իրականացվում է «Մարտունի 35/10 կՎ» ենթակայանի "Շրջկենտրոն" 10 կՎ օդային գծից: Օդային գծի երկարությունը կազմում է մոտ 300մ:
Տեխնիկական պահանջները
Նախագծման փուլերը
- ✓ տեղազննում և չափագրում
- ✓ թերությունների ակտի կազմում
- ✓ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում

Նախագծի կազմը՝ տեխնիկական նախագիծ, ծավալաթերթ, նախահաշիվ /հայերեն և ռուսերեն լեզուներով/, նախագծող կազմակերպության երաշխավորագրով
**Միջանկյալ համաձայնեցում պատվիրատուի հետ՝** թերությունների ակտ, նոր հենասյուների տիպերի ընտրություն
Օրինակ՝ 2 (երկու) թղթային, էլեկտրոնային (PDF ձևաչափ)
Այլ պահանջներ
Նախագծային աշխատանքներն իրականացնել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջների:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
Ամերիաբանկ ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի
<<Կոնվերս Բանկ>>ՓԲԸ,Նոր Հաճն մասնաճ.
հ/հ 1930006838240100
ՀՎՀՀ 03309022

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1
«03» 06 2019 թ. կնքված ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-19/15-2 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200 | **Բլղանչայի հեռուստակայանը** սնող 0.23 կՎ նոր կառուցվող էլեկտրահաղորդման գծի /միաֆազ, դրվածքային հզորությունը՝ 1կՎտ, գծի երկարությունը՝ մոտ 100մ/ նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայության ձեռքբերում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 109000 | 109000 | 109000 | 109000 | 109000 | 109000 | 109000 | 109000 |
| 2 | 71241200 | **Վազաշենի հեռուստակայանը** սնող 0.23 կՎ նոր կառուցվող էլեկտրահաղորդման գծի /միաֆազ, դրվածքային հզորությունը՝ 1կՎտ, գծի երկարությունը՝ մոտ 220մ/ նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայության ձեռքբերում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 159000 | 159000 | 159000 | 159000 | 159000 | 159000 | 159000 | 159000 |
| 6 | 71241200 | **Մարտունու հեռուստակայանը** սնող 10 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերանորոգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայության ձեռքբերում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 219000 | 219000 | 219000 | 219000 | 219000 | 219000 | 219000 | 219000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
Ամերիաբանկ ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի
<<Կոնվերս Բանկ>>ՓԲԸ,Նոր Հաճն մասնաճ.
հ/հ 1930006838240100
ՀՎՀՀ 03309022

(ստորագրություն)
Կ.Տ.